

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Սովորողների մեջ ստեղծագործական
ունակությունների զարգացումը համագործակցային
մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝

Իրինա Բայբության

ԴՊՐՈՑ՝

<<ԶՈՒԱՔԱՐԻ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2
ՄԻՋՆԱԿԱՐԳ >> ՊՈԱԿ

Բովանդակություն

1.Ներածություն.....	3
2.Գրական ակնարկ.....	7
3.Փորձարարական հետազոտություն.....	9
3.1.Խմբի նկարագիրը.....	9
3.2.Փորձարարական դասեր.....	10
3.2.1.Փորձարարական դաս-1.....	10
3.3.2.Փորձարարական դաս-2.....	11
4.Վերլուծություն.....	13
5.Գրականության ցանկ.....	14
6.Հավելված.....	15
1.Դասապլան-1.....	15
2.Դասապլան-2.....	18

Ներածություն

Կրթության և դաստիարակության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից հասարակության սոցիալապես կարևոր խնդիրներից մեկն է: Որպես կրթության բարձրագույն նպատակ է սահմանվում ինքնագարգացող և ինքնորոշող անհատականության ձևավորումը, որը ունակ է բաց ստեղծագործական փոխազդեցության միջավայրի և հասարակության հետ: Ներկայումս մանկավարժական գիտության առաջնահերթ խնդիրներից է անհատի և հասարակության միջև որակապես նոր հարաբերությունների ուսումնասիրությունը, երեխաների կրթության, ուսուցման և ստեղծագործական զարգացման առավել օպտիմալ ուղիների որոնումը:

Ուսուցչի մասնագիտությունն իր էությամբ ստեղծագործական է: Ժամանակակից պայմաններում կրթության գաղափարախոսության փոփոխություններն արտահայտվում են ինքնորոշման և ինքնագարգացման, ինքնակատարելագործման անձին ուղղված դիրքորոշման ստեղծմամբ: Ռազմավարական այս դիրքը ստիպում է ուսուցչին այլ կերպ սահմանել կրթական գործունեության առաջնահերթությունները՝ առաջին հերթին դնելով սովորողների անհատական զարգացումը: **(Ա. Դ. Մեմուշին և Ա. Բ. Տեսիսով)**

Թող այսօր յուրաքանչյուր ուսուցչի կարգախոսը լինի Էմիլ Զոլայի խոսքերը մեր կյանքի բոլոր ոլորտների վերաբերյալ. «Կյանքի միակ երջանկությունը մշտական առաջ գնալն է...»:

Ստեղծագործական գործունեությունը կարող են զարգացնել ստեղծագործորեն աշխատող ուսուցիչները: Նրանց ստեղծագործական փոխազդեցությունն ու ստեղծագործական համագործակցությունը անհրաժեշտ է: Ստեղծագործական համագործակցությունը մենք հասկանում ենք որպես ուսուցիչների և ուսանողների փոխգործակցության գործընթաց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար: Համատեղ գործունեության ընթացքում առավելագույնս իրացվում են ստեղծագործական կարողությունները. լրացնելով միմյանց՝ նրանք հասնում են զարգացման որակապես նոր մակարդակի: Յուրաքանչյուր դաս իրենից ներկայացնում է առաջադրանքների որոշակի համակարգ, որը աշակերտին տանում է որոշակի հասկացությունների, հմտությունների և կարողությունների յուրացմանը: Դասի նպատակներին հասնելը կախված է նրանից, թե ուսուցիչը ինչ առաջադրանքներ է ընտրում այս դասի համար, ինչ հաջորդականությամբ են դրանք կառուցված: Ուսուցիչը դասի համար պետք է ընտրի առաջադրանքներ, որոնք կծառայեն որոշակի նպատակի կամ հիմնված լինեն որևէ հասկացության, կանոնների կիրառման, որոշակի կապերի հաստատման, դիտարկումների հիման վրա օրինաչափությունների բացահայտման վրա: Այս տիպի առաջադրանքները թույլ են տալիս ոչ միայն արդյունավետ անցկացնել դասերը, այլև ծառայում են մտավոր գործունեության զարգացմանը և աշակերտների ամուր գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը: Սովորողների ստեղծագործական գործունեության ակտիվացման կարևոր միջոց է ուսումնասիրվող նյութի և նրանց շրջապատող իրականության միջև կապ հաստատելը:

Հոգեբանական և մանկավարժական գիտության մեջ բազմիցս նշվել է, որ այժմ, արագ աճող տեղեկատվության պայմաններում, առանձնահատուկ նշանակություն ունի ստեղծագործական մտածողության զարգացումն ու ակտիվացումը: Իրոք, ցանկացած գործունեության մեջ հատկապես կարևոր է դառնում ոչ միայն որոշակի քանակությամբ գիտելիքներ ձեռք բերելը, այլ դրանցից ամենակարևորներին ընտրելը, դրանք կիրառելու հնարավորությունը տարբեր հարցերի լուծման մեջ: Ստեղծագործական ունակությունները հիմնված են ընդհանուր մտավոր ունակությունների վրա: Բայց պարտադիր չէ, որ ինտելեկտուալ կարողությունների զարգացման բարձր մակարդակը ենթադրի լավ զարգացած ստեղծագործական ունակություններ: Հետաքրքրությունը նպաստում է ստեղծարարության և նախաձեռնողականության առաջացմանը գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման գործում:

Երեխայի ստեղծագործական կարողությունները զարգացնել նշանակում է զարգացնել նրա երևակայությունը: Ստեղծագործական կարողությունների զարգացման համար մեծ նշանակություն ունի ուշադրության, հիշողության, երևակայության զարգացման մակարդակը: Հենց այս որակներն են, ըստ հոգեբանների, հիմք հանդիսանում արդյունավետ մտածողության, ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման և ստեղծագործական և որոնողական ակտիվության բարձրացման համար: Յուրաքանչյուր երեխա ունի կարողություններ և տաղանդներ: Երեխաները բնականաբար հետաքրքրասեր են և սովորելու ցանկություն ունեն: Որպեսզի նրանք ցույց տան իրենց տաղանդները, անհրաժեշտ է պատշաճ առաջնորդություն:

Կարևոր ու արդյունավետ է ուսուցման ժամանակակից՝ փոխներգործուն (ինտերակտիվ) և համագործակցային մեթոդները: Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Ուսուցման այս ձևը ժողովրդավարական հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է: Աշխատելով տարբեր ընդունակություններ, հմտություններ, բնավորության գծեր ունեցող դասընկերների հետ, աշակերտները զարգացնում են ժողովրդավարական հասարակությանը բնորոշ՝ բազմազան իրադրություններում արդյունավետ գործելու հմտություններ և որակներ: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտը ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- Զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- Զևավորում է հաղորդակցման հմտություն,
- Աշակերտները սովորում են միմյանցից,

- Չարգանում է աշակերտի պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- Խթանում է թիմային աշխատանքը, Ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- Քննարկումների միջոցով ամրապնդում է աշակերտների համոզմունքները,
- Ընձեռում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախիվածության ապահովումը: Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախիվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության: Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաջողության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Համագործակցային ուսուցման տարրերը հինգն են՝

1. Դրական փոխկախիվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Մովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է,

գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում: **Ա. Է. Ափոյան** „ Համագործակցային ուսուցում,„

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի դաստիարակչական նպատակներից հիմնականը սովորողների տրամաբանական մտածողության ձևավորումն ու զարգացումն է, որին հասնելու հնարավորությունների հարցում մաթեմատիկան շահեկանորեն տարբերվում է մնացած բոլոր հանրակրթական առարկաներից:

Մաթեմատիկական ուսումնասիրում է նյութական աշխարհի տարածական ձևերը և քանակական հարաբերությունները: Մաթեմատիկայի ճշմարտությունները հանդիսանում են իրականության արտացոլումը մեր գիտակցության մեջ:

Մաթեմատիկայի կրթության հիմնական նպատակն է՝

- ձևավորել ու զարգացնել տրամաբանական, լեզվական և ալգորիթմական մտածելակերպ,
- ստեղծել թվաբանական գիտելիքներ և մեթոդներ, դրանք գործնական իրադրություններում կիրառելու, օպտիմալ ուղիներ որոնելու և գտնելու հմտություն,
- դաստիարակել հարգանք մշակութային արժեքների, դրանց ստեղծողների նկատմամբ,
- տալ ազգային և հայրենասիրական դաստիարակություն,
- ստեղծել միջառարկայական կապեր,
- դաստիարակել նպատակասլացություն, պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում,
- սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- ձևավորել վերլուծական, առօրյայում կողմնորոշվելու կարողություն,
- ձևավորել ինքնուրույն աշխատելու, այլոց հետ համագործակցելու և համաձայնության գալու կուլտուրան:

Մարդկանց մտածողության մեջ իրականության արտացոլումը ենթարկվում է որոշակի օրենքների, ընթանում է որոշակի ձևերով: Դեպի ճշմարտությունների ճանապարհը տանող մտածողության օրենքները և ձևերը կազմում են տրամաբանություն գիտության առարկան: Մաթեմատիկայի ուսուցչի անելիքը այդ գործում կայանում է նրանում, որպեսզի մաթեմատիկայի դասընթացի դասավանդման պրոցեսում և այդ դասընթացի նյութերի հիման վրա կազմակերպի

նպատակապալաց և սիստեմատիկ անցկացվող աշխատանք,որը կօգնի աշակերտներին գիտակցել և նրանց կսովորեցնի գործադրել մտածողության օրենքները և նրա այնպիսի ձևերը ինչպիսիք են հասկացողությունը,դատողությունը, մտահանգումը: Ժամանակակից կրթական հայեցակարգերում ավելի է կարևորվում սովորողների բարձրակարգ մտածողության զարգացման խնդիրը: Աշխարհում տեղի ունեցող արագընթաց զարգացումները իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով գիտելիքահեն տնտեսության և տեղեկատվական հասարակության պայմաններում գործող և ապրող մարդու ձևավորման նոր պահանջ: հանրակրթության առանցքային նպատակներից մեկը աշակերտին մտածել սովորեցնելն է:

Առանձնացվում են այդ նպատակին հասնելու երկու հիմնական ուղիներ՝ տրամաբանության տարրերի իմացությունը և մաթեմատիկայի ուսումնասիրությունը;

Անժխտելի է, որ ուսուցման արդյունավետությունը ամենից առաջ պայմանավորված է սովորողների մտավոր ակտիվության մակարդակով: Եթե նրանք չեն ցուցաբերում անհրաժեշտ հետաքրքրություն և ձգտում հաղորդվելիք տեսական նյութի կամ տրված առաջադրանքի նկատմամբ,գտնվում են պասիվ վիճակում, ապա ուսուցման արդյունավետության մասին խոսելը դառնում է ավելորդ: Այդ նպատակով մաթեմատիկայի դասը պետք է դարձնել գրավիչ, հետաքրքիր, բարձրացնել սովորողների մտավոր ակտիվությունը: Ուսումնական գործընթացի ամենադժվար պահերից մեկը դասանյութի խորությունը հետաքրքրության հետ շաղկապելն է:Դասավանդման մեթոդների ճիշտ ընտրության դեպքում մաթեմատիկայի դասաժամը անսպառ հնարաւխրություն է ընձեռում զարգացնելու սովորողի մտածողությունը, մաթեմատիկական հետաքրքրությունները: Տրամաբանական դատողությունները ձևավորում ու հղկում են երեխայի կերպարն ընդհանրապես, դաստիարակում նրա կամքը, նպատակաուղղվածությունը, առաջացնում մաթեմատիկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն: Ուսուցչի հիմնական խնդիրն է սովորողի հետաքրքրություններին տալ որոշակի ուղղություն, ձևավորել սովորողի ճանաչողական հետաքրքրությունը և ցույց տալ գիտելիքների կարևորությունը:

գիտելիքների, ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, մտահանգումներին, հայացքների և տեսակետների անձնային որակների, ինքնագնահատման և ինքնուրույնության ձևավորմանը, ցանկացած հասարակության մեջ պատշաճ վարքագծի փորձի ձեռքբերմանը:

Այս խնդիրների լուծման մեթոդներն ու հնարները բազմազան են: Դրանք են՝ տրամաբանական, հետաքրքրաշարժ, կոնստրուկտիվություն պահանջող և խաղային առաջադրանքները, օրինաչափությունները, մաթեմատիկական խաչբառերը և այլն: Այդ միջոցների ճիշտ և նպատակային կիրառումը կակտիվացնի սովորողներին, կստեղծի ջերմ ու հաճելի մթնոլորտ, կմեծացնի հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դրանք կնպաստեն, որ սովորողների կարողությունները աստիճանաբար վերածվեն հմտությունների, գիտելիքները դառնան ավելի կայուն:

.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. „Մանկավարժություն,,

Ես իմ փորձարարական աշխատանքը կանցկացնեմ երկրաչափություն առարկայից: Երկրաչափությունը հնագույն գիտություններից մեկն է, որը ծագել է մարդկանց ամենօրյա խնդիրների հիման վրա՝ տարածքներ չափելու, հողամասերի-մասկերեսները հաշվելու, ջրամբարների ծավալները-չափելու և շենք ու շինություն կառուցելու համար:

Երկրաչափությունը պատկերների մի ուրույն աշխարհ է, որտեղ նրանք բնակվուն են հաշտ ու խաղաղ, իրենց կանոններով և օրենքներով:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Գեղարքունիքի մարզի Զուլաքարի Ա.Վարդանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանում սովորում են 20 աշակերտներ 12 աղջիկ և 8 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ,երկրաչափություն առարկայից որոշեցի համագործակցային մեթոդի միջոցով իրականացնեմ հետազոտական աշխատանք,որպեսզի զարգացնեմ աշակերտների ստեղծագործական ընդունակությունները:

Երկրաչափություն առարկան անցնում են շաբաթական 2 ժամ և դասացուցակում այն տեղադրված է 1-3-րդ ժամերին: Իմ հետազոտական աշխատանքը որոշեցի իրականացնեմ աշակերտների հետ,կազմակերպելով համագործակցային ուսուցում,կփորցեմ նրանց մոտ ուժեղացնել համագործակցային հմտությունները (թիմային աշխատանք, սոցիալական հմտություններ), տեղեկատվության մշակման հմտությունները (մտածողության հմտություններ), բազմազանության ըմբռնումն ու ընդունումը,անհատականությունը` ինքնավստահությունը և ակտիվ քաղաքացիությունը, ստեղծագործական կարողությունները և գործնականությունը;կնպաստեմ սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը,սովորողների մոտ զարգացնել տրամաբանական մտածողություն և ստեղծագործական կարողություններ:

Փորձարարական դասեր

3.2. Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման է` Բազմանկյուններ(դասապլանը տեղադրված է հավելված բաժնում): Դասաժամն սկսվեց ողջույնով,հաճախումների ստուգումով(մեկ աշակերտ բացակա էր),ստուգվեց և քննարկվեց տնային աշխատանքները:Այնուհետև կատարվեց բանավոր հարցում`կրկնելու անցած նյութը: Նոր նյութը բացատրելու համար հետաքրքրություն մտցրեցի և նախ արտասանեցի հետևյալը`

Բազմանկյուն էմ,բազմանկյուն,
Ունեմ բազմաթիվ անկյուն,
Դե կողմերս շուտ հաշվեք
Ու պարագիծս գտեք:

Հետո աշակերտներին բաժանեցի 4 հոգանոց խմբերի,առաջարկեցի նշեն 5 կետ,որոնցից ոչ մի երեքը չգտնվի մի ողի վրա,այնուհետև հաջորդաբար միացնեն դրանք՝ ծայրակետերում հատվող հատվածներով;

Աշխատանքներն ավարտելուց հետո հանձնարավեց խմբերին քննարկել,ինչ պատկերներ են ստացել,որից հետո համագործակցելով խմբերը միմյանց հետ քննարկեցին և համեմատեցին ստացված պատկերները:Քննարկումներից հետո բացատրում եմ ինչ է բազմանկյունը,որոնք են նրա էլեմենտները,ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանկյունների տարբերությունը,բերում բնությունից,շրջակա միջավայրից օրինակներ: Յուրաքանչյուր խմբին հանձնարարում եմ պարզել,թե իրենց գծած բազմանկյունը ինչ բազմանկյուն է և սկսում են քննարկել:Հայտնում եմ,որ ֆուտբոլի գնդակը պատրաստում են 2 տարբեր գույնի ուռուցիկ 6-անկյուն բազմանկյան տեսքի կաշվե կտորներից և այդ բազմանկյան անկյունները և կողմերը հավասար են:Առաջարկում եմ ինքնուրույն անկյունաչափի օգնությամբ կառուցել ուռուցիկ 6-անկյուն բազմանկյուն և գտնել ներքին անկյունների գումարը:Յուրաքանչյուր խումբ գտնում է և քննարկում անկյունների գումարը գտնելու եղանակները,համեմատում են ստացված արդյունքները և համոզվում,որ այն հավասար է 720° :Այնուհետև խմբերին հանձնարարում եմ գծել տարբեր n-անկյուն բազմանկյուններ և մի գագաթից էլնող անկյունագծերով բազմանկյունը բաժանել եռանկյունների:Քանի որ աշակերտներն գիտեն,որ եռանկյան անկյունների գումարը հավասար է 180° , ինքնուրույն արտածում են բանաձև n-անկյուն բազմանկյան ներքին անկյունների գումարը հաշվելու համար $(n-2)180^\circ$:

3.3 Փորձարարական դաս -2

Այսօրվա դասի թեման է՝ <<Ձուգահեռագիծ>>(դասապլանը տեղադրված է հավելված բաժնում): Դասաժամն սկսվեց ողջույնով,հաճախումների ստուգումով(2 աշակերտ բացակա էին), ստուգվեց և քննարկվեց տնային

աշխատանքները:Այնուհետև կատարվեց հարցերի մտազրոհ`կրկնելու անցած նյութը: Նոր դասը սկսեցի գրատախտակին գծելով զուգահեռագիծ և տվեցի սահմանումը:Այնուհետև դասարանանը բաժանվեց 5 հոգանոց 4 խմբերի և ստացան համապատասխան ցուցումները:Յուրաքանչյուր խմբի տալիս եմ ծրարներ<մասնատված զուգահեռագծերով>:Հանձնարարվում է յուրաքանչյուր խմբին հավաքել այդ կտորներից քառանկյուն,որ դառնա զուգահեռագիծայսինքն աշակերտները ինքնուրույն պետք է հանգեն զուգահեռագծի հատկություններին:

Զուգահեռագծի հանդիպակաց կողմերը հավասար են,և հանդիպակաց անկյունները հավասար են:

Զուգահեռագծի անկյունագծերը հատման կետով կիսվում են:

Հետո միասին սահմանում ենք նաև զուգահեռագծի հայտանիշները,թե երբ է քառանկյունը դառնում զուգահեռագիծ:

4. Վերլուծություն

Աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր:Փորձարարական 2 դասերից հետո եկա այն եզրակացության,որ երկրաչափության ժամերն ավելի արդյունավետ են դառնում ուսուցման փոխներգործուն և համագործակցային մեթոդների օգտագործումն ,որի շնորհիվ դուրին ու հեշտ է, կարևորվում է աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը և խրախուսելի է դառնում գիտելիքների ձեռքբերումը:

Իմ անցկացրած երկու փորձարարական դասերից հետո կառանձնացնեմ հետևյալ դրական կողմերը՝

- 1.սովորողների առավելագույն ակտիվություն
- 2.սովորողների մոտ ստեղծագործական կարողությունների զարգացում
- 3.ինքնուրույն և արագ մտածելու կարողության զարգացում:

5. Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. „Մանկավարժություն,,

2. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝
<<Մաթեմատիկա>>

3. Է. Ափոյան „ Համագործակցային ուսուցում,,

4. *Նարինե Բայաթյան, Ինգա Վարդանյան «Դասի պլանների ժողովածու»*

5. Ալ. Հովհաննիսյան և ուրիշներ, Համագործակցային ուսուցում, ձեռնարկ, Երևան

6. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու
մասնաճյուղ, ք. Վանաձոր 2008թ

6. Հավելված

Դասալսան-1

Ուսուցիչ Իրինա Բայաթյան

Առարկա	Երկրաչափություն
Աշակերտների քանակ	20, աղջիկ 12 տղա 8
Դասարան և կիսամյակ	8-րդ դասարան, առաջին կիսամյակ
Թեմա	Բազմանկյուններ, ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանկյուններ
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, կավիճ, մարկերներ, կաշուն թղթեր
Ամբողջական պատկեր և դասի նպատակ	<p>Սովորողները արդեն գիտեն՝ հատված, հատվածի երկարություն, անկյուն, անկյան տեսակները, անկյան չափումը, բեկյալ, բաց և փակ բեկյալներ, բեկյալի երկարություն, եռանկյուն, եռանկյան անկյունների գումարը, արտաքին անկյուն:</p> <p>Այս դասին սովորողները կիմանան ի՞նչ է բազմանկյունը, կճանաչեն բազմանկյան տեսակները, կտարբերեն ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանկյունները, կկիրառեն ուռուցիկ բազմանկյունների անկյունների գումարի բանաձևը խնդիրներ լուծելիս,</p> <p>կառուցողական և խնդիրների լուծման կարողությունների զարգացում խմբի աշխատանքներում սեփական ներդրումը կատարելու հմտության զարգացում:</p> <p>Այսօրվա դասի գիտելիքները սովորողները կօգտագործեն հաջորդ դասերի Քառանկյունների տեսակների ուսումնասիրության ժամանակ, նրանց անկյունների գումարը իմանալու համար:</p> <p>Այս դասի թեման կապվում է իրական կյանքին հետևյալ կերպ Կարևոր նշանակություն ունեն բազմանկյունները մեր շրջապատում, բո- րնագավառներում օգտագործվում են և նրանց հատկությունները իմանալով կպատրաստեն ճշգրիտ մոդելները: Ոսկերչության բնագավառում լայն տարածում ունեն բազմանկյունները տարբեր զարդ- պատրաստելու ժամանակ:</p>

Վերջնարդյունքները	<p>Աշակերտը կկարողանա.</p> <p>Նկարագրել բազմանկյունը, տեսակները, ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանկյունները, Թվարկել բազմանկյունների տեսակները, Համեմատել բազմանկյունների տեսակները Պատրաստել բազմանկյունների մոդելներ Լուծել խնդիրներ կիրառելով ուռուցիկ բազմանկյունների անկյունների գումարի բանաձևը հաճույք ստանալ դասից մարդկության ձեռքբերումների կարևորության գիտակցում, խմբի անդամների միջև համագործակցային հմտությունների զարգացում:</p>
Տնային աշխատանք	Լուծել խնդիրներ 4,6,12

Դասի ընթացքի նկարագրություն

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն աշակերտներ	Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ
Մուտք,ներկա-բացակա(3ր)	Բացում են տետրերն ու դասագրքերը,տալիս անհասկանալի հարցեր տնային աշխատանքներից	Ողջունում են,կատարում հաշվառում Տնային աշխատանքների ստուգում,քննարկում և պատասխանում անհասկանալի հարցերին	
Սկիզբ(5-7ր)	Աշակերտները լսում են հարցերը,հիշում անցածը և պատասխանում հարցերին	Մտազրոհ են անում,հարցերի միջոցով կրկնում ենք նախորդ դասերին անցածը	

<p>Ընթացք(25-30ր)</p>	<p>Խմբերն աշխատում են,քննարկում և ներկայացնում իրենց աշխատանքները</p>	<p>Բաժանում են խմբերի և տալիս համապատասխան առաջադրանքը</p>	
		<p>Գրատախտակին ցույց եմ տալիս ուղղորդող հարցեր</p>	<p>Որ բազմանկյունն է կոչվում ուռուցիկ,որը ոչ ուռուցիկ: Որն է կոչվում բազմանկյան անկյունագիծ: Քանի՞ անկյունագիծ ունի հնգանկյուն բազմանկյունը: Քանի՞ եռանկյան է տրոհվում հնգանկյուն բազմանկյունը: Ինչ բանաձևով է տրվում ուռուցիկ ո-անկյուն բազմանկյան անկյունների գումարը: Որ բազմանկյունն է կոչվում կանոնավոր:</p>
<p>Ավարտ(5ր)</p>	<p>Խմբերը ներկայացնում են կատարված աշխատանքները</p>	<p>Կատարում եմ գնահատում չափորոշչով սահմանված վերջնաքայունքներով</p>	

Դասապլան 2

Ուսուցիչ՝ *Իրինա Բայաթյան*

Առարկա՝	Երկրաչափություն			Կիսամյակ	1	Դասարան	8
Թեմա՝	Զուգահեռագիծ						
Օգտագործվող նյութեր	Պաստառ, կավիճ, գրատախտակ, գրիչներ, դասագիրք						
Դասի նպատակը՝	<p>Խորոցնել և ամրացնել բազմանկյունների մասին գիտելիքները</p> <p>Սահմանել ինչ է զուգահեռագիծը</p> <p>Բացահայտել զուգահեռագծի հատկությունները</p> <p>Տարբերել զուգահեռագիծը մյուս քառանկյուններից ներկայացնել զուգահեռագծի հայտանիշները</p>						

Ուսուցման փաստեր, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	<p>Աշակերտը կկարողանա՝</p> <p>տարբերակել զուգահեռագիծը</p> <p>սահմանել զուգահեռագիծը</p> <p>ձևակերպել զուգահեռագծի հատկություններն ու հայտանիշները կիրառել դրանք խնդիրներ լուծելիս:</p>			
Գործողություններ	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Ժամ/տևողություն	Աշակերտներ	Ուսուցիչ		

7րոպե	<p>Բացել դասագրքերը, կրկնել դասը:</p> <p>Ներկայացնել տնային աշխատանքները</p>	<p>Ողջունել դասարանին, կատարել հաճախումների ստուգում, ամփոփել նախորդ դասը, ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը:</p>		Մտազրոհ
5 րոպե	<p>Լսում են ուսուցչին, պատասխանում են հնչեցրած հարցերին</p>	<p>Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին</p>		
15րոպե	<p>.Աշակերտները բաժանվում են 5 հոգանոց խմբերի</p> <p>.Կատարում են առաջադրանքները</p>	<p>.Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ</p> <p>.Ուղղորդել աշակերտներին աշխատելիս</p>	<p>Ո՞ր քառանկյունն է կոչվում զուգահեռագիծ: Ինչպիսի՞ հատկություններ ունի զուգահեռագիծը:</p> <p>Քանի հայտանիշ ունի զուգահեռագիծը</p>	<p>Համագործակցային Մեթոդ</p>
Ավարտ(15րոպե)	<p>Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը</p>	<p>Խրախուսում եմ աշակերտներին և գնահատում:</p>		
Տնային աշխատանք-3 րոպե		Լուծել խնդիրներ 16,18,22		